ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պետրոսյանի, Տ. Լաճիկյանի, Ա. Թագայանի
«Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127» ծածկագրով գնանշման հարցում, հանդերձանքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/216-2020 գրությամբ «Վանպոլիմեդ»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.01.2020թ. թիվ 01/8-20 գրության հիման վրա, 13.01.2020թ.-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 13.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 16.01.2020թ.-ին, 29.01.2020թ.-ին և 05.02.2020թ.-ին նշանակվել են նստեր:

Գործի քննությունն ավարտվել է 05.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.02.2020թ.-ին:

2. <u>«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, 09.01.2020թ. թիվ 01/8-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում ենք Ձեզ, որ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն պատշաճ չի իրականացրել վերջինիս և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի նոյեմբերի 04-ին կնքված կապալային աշխատանքների կատարման թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1 պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ընթացքում հայտնաբերվել են թերություններ, որոնց վերացման համար ընկերությանը տրամադրվել է ողջամիտ ժամկետ, սակայն ընկերության կողմից ձեռնարկված աշխատանքների արդյունքում նշված թերությունները չեն վերացել, ինչի արդյունքում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերը նշված պայմանագիրը միակողմանի լուծվել է:»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է հայտարարված «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.01.2019թ.-ին գրությամբ դիմել է «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/216-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև հրավիրված նիստին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«2019թ. հոկտեմբերի 4-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՇԳՅ էներգաբլոկի ասֆալտապատ ավտոճանապարհների ճաքալցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45-րդ օրացուցային օրը:

Պայմանագրի 3.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետ և

պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1.4. կետի «գ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

«Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ուղղված 30.12.2019թ. թիվ 310.1-19 գրությամբ (կցվում է) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «գ» ենթակետի պահանջները:

Այնուհետև, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետևնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

1. Ինչպես արդեն հայտնել ենք, 2019թ. հոկտեմբերի 4-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պայմանագիր:

Վերը նշված պայմանագիրը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից 30.12.2019թ. թիվ 310.1-19 գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «գ» ենթակետի պահանջները, ըստ որի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է՝ ճաքալցման նպատակը ասֆալտաբետոնե ճաքերի հետագա զարգացման կասեցումն է, այլ ոչ թե ասֆալտաբետոնե ճաքերի ճաքափակումը:

Նույնիսկ անզեն աչքով տեսանելի է, որ կատարված ճաքալցման արդյունքում՝ նույնիսկ կտրվածք անելով կամ ջրային փորձարկումների ենթարկելով որևէ հիդրոմեկուսացման խաթարում չի նկատվում, հետևաբար ճաքալցումը կատարում է իր վրա դրված հիդրոմեկուսացման ֆունկցիան: Ավելին վերը նշված աշխատանքները կատարվել են սերտիֆակացված նյութերով՝ համաձայն մշակված հրահանգավորման:

2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, այն է.

Պայմանագրի 4.1-րդ կետի համաձայն՝ կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 4.2-րդ կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված

հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 4.3-րդ կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Պայմանագրի 4.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահման¬ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ 2019թ. նոյեմբերի 11-ին Ընկերությունը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Պատվիրատուին է տրամադրել իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը /համապատասխան ապացույցը կցվում է/:

Պատվիրատուն Պայմանագրի 4.2 կետով սահմանված տաս աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ոչ ստորագրել, ոչ էլ Կատարողին հետ է վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը՝ դրանում նշելով չստորագրելու համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Այնինչ՝ Պայմանագրի 4.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված:

Փաստացիորեն, եթե «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն 2019թ. նոյեմբերի 11-ին armeps համակարգի միջոցով Պատվիրատուին է տրամադրել իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, ապա հաշվի առնելով այն կարևորագույն փաստը, որ նշված արձանագրությունը Պատվիրատուի կողմից ոչ ընդունվել է, ոչ էլ armeps համակարգի միջոցով վերադարձվել բացասական եզրակացության հետ միասին, ապա Պայմանագրի 4.4-րդ կետի ուժով կատարված աշխատանքը պետք է համարվի ընդունված: Ուստի նման պարագայում Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծումը դառնում է ոչ իրավաչափ:

Վերը նշված փաստական հանգամանքի հետ կապված իր տեսակետն է հայտնել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը իր՝ 07.05.2019թ. գրությամբ /կցվում է/, մասնավորապես նշելով՝

Վերոհիշյալ պայմանագրի <<Ծառայության հանձնման և ընդունման կարգը>> 3-րդ բաժնով նախատեսված կարգավորումների համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Եվ եթե վերոհիշյալ ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և նշված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք, որ պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ երկկողմ հաստատված փաստաթղթի բացակայության պարագայում դեպարտամենտը պետք է վերոնշյալ ժամկետում հետ վերադարձներ նշված փաստաթղթերը:

Վերը նշված պարզաբանումը հիմք է հանդիսացել գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից ՍՑ-ՆԳ-2019/17 ծածկագրով ընթացակարգով կայացրած որոշման համար, որի արդյունքում ՍՑ-ՆԳ-2019/17 ծածկագրով ընթացակարգը մերժվել է և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է՝ Պայմանագրի 8.10 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի

լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ փաստում ենք, որ կողմերի միջև կնքված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում (ինչպես պարզ դարձավ նշված ընթացակարգի շրջանակներում, խանուցումը հրապարակվել է այլ բաժնում):

Այսպիսով, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Պայմանագրի 8.10 կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները /պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ/:

Վերը նշված հիմնավորումը ներառվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ՍՅ-ԼՕ-2019/180, ՍՅ-ԼՕ-2019/194 և ՍՅ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի որոշման մեջ, որի արդյունքում վերը նշված ծածկագրով ընթացակարգերը մերժվել են և <<Գրիտիգ>> ՍՊԸ-ն, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել երկու կարևոր հանգամանք, որոնք Ընկերության կարծիքով, էական նշանակություն ունեն «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու հարցը որոշելու համար.

1. Պայմանագրի 4.4. կետի ուժով՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխա¬տան¬քը համարվում է ընդունված, ուստի առկա չէ պայմանագրային պարտավորության խախտում թույլ տալու փաստ:

2. Պայմանագրի 8.10 կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի ուժով՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված:

Արդյունքում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման և թույլ տված անգործության հետևանքով այսօր «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն հայտնվել է <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին չվերագրել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>>:»:

4. <u>ՍՅ-ԼՕ-2020/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 04.10.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի առարկան է հանդիսացել Պայմանագրի թիվ 1.1 հավելվածով (այսուհետ՝ Հավելված 1.1) սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՇԳՑ էներգաբլոկի ասֆալտապատ ավտոճանապարհների ճաքալցման աշխատանքները:

18.11.2019թ.-ին Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ա. Թագայանի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություն, որում նշվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ճաքալցման աշխատանքներից հետո գրեթե բոլոր տեղամասերում լցոնված նյութի վրա կրկին առաջացել են ճաքեր: Կրկնակի ճաքալցման աշխատանքները ևս արդյունավետ չեն եղել: «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն 2019թ. նոյեմբերի 11-ից 18-ը ժամանակահատվածում ևս մեկ անգամ կատարել է ճաքերի վերալցում, սակայն աշխատանքները ավարտելուց հետո բացահայտվել է, որ գրեթե բոլոր տեղամասերում լցոնված նյութերը կրկին ճաքած են, և շարունակում են ճաքել /կից ներկայացվել են թերությունների նկարները՝ CD սկավառակով/: «Վանպոլիմեդ» ՍՊԸ որևէ ներկայացուցիչը չի ներկայացել աշխատանքների արդյունքի հանձնում իրականացնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տրվել է բացասական եզբակացություն:

26.11.2019թ.-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ներկայացված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ *«Ձեր կողմից ներկայացվել է N «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագրի կատարողական ակտերը և armeps համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրությունները: Սույնով տեղեկացնում եմ, որ կատարված աշխատանքներում առկա են թերություններ, որոնց պայմաններում մեր կողմից չեն կարող ստորագրվել ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունները: Ղեկավարվելով Պայմանագրի 4.3 կետով՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին հետ է վերադարձվում հանձնման-ընդունման արձանագրությունը, կատարողական ակտերը, ինչպես նաև ներկայացվում է դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Միաժամանակ՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.3 կետը՝ թերությունների վերացման համար սահմանվում է 10 օրացուցային օր ժամանակ՝ հաշվված «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից սույն գրության ստացման պահից: Սույնով առաջարկվում է սահմանված 10 օրյա ժամկետում վերացնել բացահայտված բոլոր թերությունները, հակառակ դեպքում ստիպված կլինենք կիրառել Պայմանագրի 3.1.4 կետի դ) ենթակետով նախատեսված պահանջը:»:*

05.12.2019թ.-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ներկայացված մեկ այլ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ *«Ի պատասխան Ձեր 05.12.2019թ.-ի N 24 գրության և ի լրումն մեր 26.11.2019թ. թիվ 285.1-19 գրության հայտնում եմ, որ կապված կատարված աշխատանքների համատեղ զննում անցկացնելու անհրաժեշտության հետ, համաձայն Պայմանագրի 3.1.3 կետի՝ թերությունների վերացման համար սահմանված 10 օրացուցային օր ժամանակը կհաշվվի կատարված աշխատանքների համատեղ զննման արդյունքների վերաբերյալ համապատասխան արձանագրության /ակտի/ հաստատման պահից, որը ոչ բարենպաստ եղանակային պայմանների պատճառով կարող է երկակարձգվել, բայց ոչ ուշ քան մինչև 23.12.2019թ.-ը՝ ներառյալ:»:*

27.12.2019թ.-ին Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ մեկ այլ եզրակացություն, որում նշվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցին տրված ողջամիտ ժամկետում, վերջինիս կողմից թերությունները վերացնելուց հետո կրկին առաջացել են ճաքեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տրվել է բացասական եզբակացություն:

www.gnumner.am համացանցային կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում 08.01.2020թ. հրապարակված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 04.10.2019թ.-ին կնքված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պայմանագիրը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից 30.12.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի ուժով (խախտվել են աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/216-2020 գրությամբ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ ամսի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1.1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՇԳՑ էներգաբլոկի ասֆալտապատ ավտոճանապարհների ճաքալցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1.1 կետ համաձայն՝ ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

Պայմանագրի 3.1.3 կետի համաձայն՝ չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 04.10.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի առարկան է հանդիսացել Պայմանագրի Հավելված 1.1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՇԳՑ էներգաբլոկի ասֆալտապատ ավտոճանապարհների ճաքալցման աշխատանքները:

18.11.2019թ.-ին Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ա. Թագայանի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություն, որում նշվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ճաքալցման աշխատանքներից հետո գրեթե բոլոր տեղամասերում լցոնված նյութի վրա կրկին առաջացել են ճաքեր: Կրկնակի ճաքալցման աշխատանքները ևս արդյունավետ չեն եղել: «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն 2019թ. նոյեմբերի 11-ից 18-ը ժամանակահատվածում ևս մեկ անգամ կատարել է ճաքերի վերալցում, սակայն աշխատանքները ավարտելուց հետո բացահայտվել է, որ գրեթե բոլոր տեղամասերում լցոնված նյութերը կրկին ճաքած են, և շարունակում են ճաքել /կից ներկայացվել են թերությունների նկարները՝ CD սկավառակով/: «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի որևէ ներկայացուցիչ չի ներկայացել աշխատանքների արդյունքի հանձնում իրականացնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տրվել է բացասական եզրակացություն:

26.11.2019թ.-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ներկայացված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ *«Ձեր կողմից ներկայացվել է N «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագրի կատարողական ակտերը և armeps համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրությունները: Սույնով տեղեկացնում եմ, որ կատարված աշխատանքներում առկա են թերություններ, որոնց պայմաններում մեր կողմից չեն կարող ստորագրվել ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունները: Ղեկավարվելով Պայմանագրի 4.3 կետով՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին հետ է վերադարձվում հանձնման-ընդունման արձանագրությունը, կատարողական ակտերը, ինչպես նաև ներկայացվում է դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Միաժամանակ՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.3 կետը՝ թերությունների վերացման համար սահմանվում է 10 օրացուցային օր ժամանակ՝ հաշվված «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից սույն գրության ստացման պահից: Սույնով առաջարկվում է սահմանված 10 օրյա ժամկետում վերացնել բացահայտված բոլոր թերությունները, հակառակ դեպքում ստիպված կլինենք կիրառել Պայմանագրի 3.1.4 կետի դ) ենթակետով նախատեսված պահանջը:»:*

05.12.2019թ.-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ներկայացված մեկ այլ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ *«Ի պատասխան Ձեր 05.12.2019թ.-ի N 24 գրության և ի լրումն մեր 26.11.2019թ. թիվ 285.1-19 գրության հայտնում եմ, որ կապված կատարված աշխատանքների համատեղ զննում անցկացնելու անհրաժեշտության հետ, համաձայն Պայմանագրի 3.1.3 կետի՝ թերությունների վերացման համար սահմանված 10 օրացուցային օր ժամանակը կհաշվվի կատարված աշխատանքների համատեղ զննման արդյունքների վերաբերյալ համապատասխան արձանագրության /ակտի/ հաստատման պահից, որը ոչ բարենպաստ եղանակային պայմանների պատճառով կարող է երկարձգվել, բայց ոչ ուշ քան մինչև 23.12.2019թ.-ը՝ ներառյալ:»:*

27.12.2019թ.-ին Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ մեկ այլ եզրակացություն, որում նշվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցին տրված ողջամիտ ժամկետում, վերջինիս կողմից թերությունները վերացնելուց հետո կրկին առաջացել են ճաքեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տրվել է բացասական եզբակացություն:

www.gnumner.am համացանցային կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում 08.01.2020թ. հրապարակված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 04.10.2019թ.-ին կնքված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/127-1» ծածկագրով պայմանագիրը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից 30.12.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի ուժով (խախտվել են աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից թերությունները չեն վերացվել, որի վերաբերյալ տրվել է երկու բացասական եզբակացություն, որի արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 30.12.2019թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 08.01.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից 18.11.2019թ.-ին և 05.12.2019թ.-ին կազմված թվով երկու եզրակացություններում արձանագրված թերությունները Մասնակցին տրված ողջամիտ ժամկետում չեն վերացվել, որպիսի պայմաններում կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացրած armeps.am համակարգի միջոցով կատարված աշխատանքի հանձնման-ընդունման փաստին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ սույն գործով ձեռք բերված փաստերով, մասնավորապես՝ Պատվիրատուի կողմից 26.11.2019թ.-ին «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ներկայացված գրությամբ ապացուցվում է, որ պայմանագրի կատարողական ակտերը և armeps համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրությունները չեն ստորագրվել, հետ են վերադարձվել՝ դրանց

չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությամբ, պահպանելով և հիմք ընդունելով Պայմանագրի 4.3 կետի դրույթները, այն է՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Պայմանագրով սահմանված (Պատվիրատուի կողմից տրամադրված) ժամկետում չի վերացրել

արձանագրված թերությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/216-2020 գրությամբ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/02 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ